

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Եւրոպայի Դռները Կը Բացուին Հայաստանի Առջեւ

Հայաստանի նկատմամբ Եւրոպական շարք մը երկիրներու հոգածութիւնը ու ցուցաբերած քաղաքական ու ռազմական գորակցութիւնը այժմ սկսած են ստանալ նոր ու կարեւոր հանգամանքներ: Եւրոպական Խորհրդարանը գրեթէ միաձայնութեամբ ընդունեց Եւրոպական Միութեան անդամակցելու Հայաստանի թեկնածութեան կարելութիւնները դիտարկելու միտում բանաձեւ, որ կը նկատուի առաջին քայլը դէպի Եւրոպական ընտանիքի անդամ դառնալու ճանապարհին:

Առայժմ Հայաստան պաշտօնապէս չէ դիմած Եւրոպական Միութեան անդամակցութեան, սակայն իշխանութեան մաս կազմող քաղաքական գործիչներ վերջին շրջանին սկսած էին ակնարկել այդ մասին: Սակայն վարչապետ Փաշինեանի արձագանքը աւելի զգուշաւոր էր: Բանաձեւը ողջունելէ ետք վարչապետը յայտնեց, թէ այդ հարցը Հայաստանի մէջ հանրային քննարկման առարկայ պէտք է դառնայ: «Յոյս ունեմ, որ Հայաստանի Հանրապետութեան քաղաքական ուժերը, հասարակական կազմակերպութիւնները, հանրութեան տարբեր շերտեր, քաղաքացիներ վերաբերմունք կ'արտայայտեն Եւրոպական Խորհրդարանից հնչող այս ուղերձի վերաբերեալ, որովհետեւ նման ուղերձներն ունեն շատ աւելի լայն արձագանգի կարիք, քան կառավարութիւնը կամ Խորհրդարանական մեծամասնութիւնը», ըսաւ Փաշինեան:

Նախ պէտք է արձանագրել որ, Եւրոպական Միութեան անդամակցութիւնը երկար գործընթաց է ու հոն հասնելու ճանապարհին կան բազմաթիւ նախապայմաններ, որոնցմէ գլխաւորը ժողովրդավարութեան ամրապնդումը, քաղաքական կայունութիւնը, մարդկային եւ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութիւնը, ազատ տնտեսութիւնը: Հայաստան տակաւին չէ հասած այդ մակարդակներուն, իսկ կարգ մը Եւրոպական չափանիշեր խորթ են հայկական ընտանեկան աւանդոյթներուն:

Եւրոպական Միութիւնը նախ եւ առաջ տնտեսական միացեալ շուկայ է, որուն մաս կազմելէ առաջ Հայաստան պէտք է դուրս գայ Ռուսաստանի գլխաւորած Եւրասիական Տնտեսական Միութենէն: Այդ Միութիւնը ներկայիս բաւական մեծ օգուտներ կու տայ Հայաստանին:

ՆԱԹՕ-ն Կ'աջակցի Հայաստանի Ինքնիշխանութեան Ու Տարածքային Ամբողջականութեան. Սթոլթենպերկ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան եւ ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Ենս Սթոլթենպերկ երեւանի մէջ կայացած մամուլի ասուլիսի ընթացքին

Առաջին անգամ պաշտօնական այցով Երեւան ժամանած է ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղար Ենս Սթոլթենպերկը:

ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ համատեղ յայտարարութիւններու ժամանակ ընդգծեց. «ՆԱԹՕ-ն կ'աջակցի Հայաստանի ինքնիշխանութեան ու տարածքային ամբողջականութեան եւ խաղաղ ձգտումներուն»:

Ան նշեց, ու Ուքրանիոյ մէջ մ Ռուսաստանի պատերազմը սթափեցնող լիչեցում է, որ չենք կրնար խաղաղութիւնը չզնահատել. «Ես

կ'ողջունեմ ձեր համերաշխութիւնը Ուքրանիոյ հետ եւ բոլոր գործընկերներուն կողմէ կ'ընեմ կատարելու իրենցմէ կախուած ամէն ինչ, որ Փութինը չյաղթէ նախադրական պատերազմին: Մարտադաշտին վրայ իրավիճակը կը մնայ ծանր, բայց այս պատճառով ալ պէտք է աւելցնել, ոչ թէ պակասեցնել մեր աջակցութիւնը:

Եթէ Փութինը Ուքրանիոյ մէջ յաջողութեան հասնի, իրական վտանգ կայ, որ անոր յաջողութիւնը այնտեղ կանգ չառնէ, եւ այլ մենատիրականները ոգեշնչուին անկէ»:

Տեղի Ունեցաւ Հնչակեան Կուսակցութեան Պատմութեան Նուիրուած Անգլերէն Հատորի Ներկայացումը



Բանախօս Դոկտ. Տէր Մաթոսեան (ծախին) եւ օրուան համադրող՝ Մանուկ Աւետիքեան

Մարտ 14-ի երեկոյեան Փաստինայի ՀԿԲՄ-ի կեդրոնէն ներս՝ կազմակերպութեամբ «Մասիս» Հրատարակչութեան, տեղի ունեցաւ «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն. Քաղաքականութիւն, Գաղափարախօսութիւն եւ Միջ-Ազգային Պատմութիւն» Անգլ-

լերէն հատորի ներկայացումը: Երեկոյին ներկայ էին ՄԴՀԿ Կեդրոնական Վարչութեան ատենապետ Ընկ. Տոքթ. Համբիկ Սարաֆեան եւ Կեդրոնական վարչութեան այլ անդամներ, ՌԱԿ Կեդրո-

Մենք Պէտք է Թույլ Չտանք Պատերազմը Սկսի. Փաշինեան Տաւուշցիներուն

Վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Տաւուշի մարզ: Նախ Ոսկեպարի մէջ վարչապետը հանդիպած է տեղի, ինչպէս նաեւ Բաղանիսի բնակիչներուն, այնուհետեւ եղած է Կիրանցի մէջ: Նիկոլ Փաշինեան անդրադարձած է Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման գործընթացին յայտարարելով որ, պէտք չէ թույլ տանք պատերազմը վերսկսի:

Ոսկեպարի մէջ ունեցած իր խօսքին մէջ վարչապետը նշած է. «Ինչպէս նախկինում պայմանաւորուել էինք, ասել էի, երբ ձեր բնակավայրի հետ կապուած գործնական խնդիրներ կը լինեն լուծելու՝ կը դամ եւ անձամբ ձեզ հետ կը քննարկեմ եւ կը զրուցեմ: Ի՞նչ գործնական հարց եմ եկել ձեզ հետ քննարկելու: Խնդիրն այն է, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ սահմանազատման եւ սահմանազծման գործընթացը մտնում է գործնական փուլ: Ի՞նչ է նշանակում սահմանազատում եւ սահմանազծում ընդհանրապէս, եւ մասնաւորաբար Հայաստանի Հանրապետութեան դէպքում: Դա նշանակում է գնալ եւ գետնի վրայ տեղորոշել, թէ որտեղ է սկսում Հայաստանի Հանրապետութիւնը: Բոլորս գիտենք, դուք ինձնից լաւ գիտէք, թէ որտեղ է սկսում կամ

Եւրոխորհրդարանը Ընդունեց ԵՄ-ին Անդամակցելու Հայաստանի Թեկնածութեան Հնարաւորութիւնը

Կողմ 504, դէմ 4, ձեռնպահ 32. Եւրոխորհրդարանը ընդունեց Եւրոպական Միութեան անդամակցելու Հայաստանի թեկնածութեան հնարաւորութիւնը դիտարկելու առաջարկող բանաձեւը:

Եթէ Հայաստանը շահագրգռուած ըլլայ թեկնածուի կարգավիճակ ստանալու համար եւ շարունակէ իր ժողովրդավարութիւնը ամրապնդող կայուն բարեփոխումներու ուղին, այդ կրնայ հիմք հանդիսանալ ԵՄ-Հայաստան յարաբերութիւններուն մէջ փոխակերպման փուլի համար», ըսուած է Եւրոխորհրդարանի պատգամաւորներուն կողմէ համատեղ ներկայացուած բանաձեւին մէջ:

Հայաստանին ԵՄ անդամակցութեան թեկնածուի կարգավիճակ տալու հնարաւորութեան մա-

ԼՈՒՐԵՐ

Փութինը Պարտուեցաւ Երեւանի Մէջ, Յաղթեց Կիւմրիի Մէջ



Երեւանի մէջ Ռուսաստանի քաղաքացիներ հերթի կը սպասեն ընտրութեան մասնակցելու համար

20 տարիէ աւելի Ռուսաստանը ղեկավարող Փութինը պարտուեցաւ Երեւանի մէջ, յաղթեց Կիւմրիի մէջ, ուր ռուսական 102-րդ ռազմախարխսին է: Ռուսաստանի քաղաքացիներուն համար Կիրակի օր ընտրատեղամասէր բացուած էին Հայաստանի այս երկու քաղաքներուն մէջ: Ըստ նախնական արդիւնքներու՝ Փութինը Երեւանի մէջ հաւաքած է քուէներուն գրեթէ 33 տոկոսը: Այստեղ յաղթած է «նոր մարդիկ» կուսակցութենէն Վլատիսլավ Տաւանքովը՝ ստանալով մօտ 50 տոկոս ձայն, իսկ Կիւմրիի մէջ Փութին առաջատարն է՝ 58 տոկոսով: Պատերազմէն յետոյ Հայաստան տեղափոխուած արտագրող Սերկէյ Յելիքով չի հաւատար այս

թիւերուն, կ'ըսէ՝ ռուսական բռնատիրական վարչակարգը մերժած ու իրենց հայրենիքը լքած մարդիկ ժամերով հերթ կանգնած էին մէկ նպատակով՝ «ոչ» ըսել Փութինին: Կիւմրիի մէջ մէկ տեղամաս բացուած էր հիւպատոսարանին մէջ, եւս երեքը՝ ռուսական 102-րդ ռազմախարխսին մէջ: «Ազատութեան» գրուցակիցները նաեւ ասով կը բացատրէին՝ ինչպէս Փութինը 50 տոկոսէ աւելի ձայն հաւաքեց Հայաստանի երկրորդ քաղաքին մէջ: Մինչդեռ նախօրէին երկարուձիգ հերթերու մէջ Ռուսիոյ քաղաքացիները չէին վախճար եւ տեսախցիկի առջեւ կը խոստովանէին՝ համաձայն չեն այն ամէնուն հետ, ինչ որ տեղի կ'ունենայ իրենց երկրին մէջ:

Պետութեան Վերադարձուեցաւ Ծաղկածորի Մէջ Գտնուող Շուրջ 20.000 Քմ Մակերեսով Անտառային Տարածքը



Կառավարութեան Մարտ 14-ի նիստի շնորհիւ շուրջ 20.000 քմ մակերեսով հողամասը (սկզբնական նպատակային նշանակութիւնը՝ անտառային տարածք) ամրացուեցաւ Տարածքային կառավարման եւ ենթակառուցուածքներու նախարարութեան պետական գոյքի կառավարման կոմիտէին: Գլխավոր Դատախազութենէն կը յիշեցնեն, որ 2023 թուականի Ապրիլ 6-ին Հակափտածութեան քաղաքացիական դատարանը բաւարարած էր Գլխավոր Դատախազութեան պետական շահերու պաշտպանութեան վարչութեան հայցը, որով կը պահանջուէր՝ Անվաւեր ճանչնալ 2007 թուականի Մայիս 26-ի աճուրդը. Որպէս հետեւանք՝ անվաւեր

ճանչնալ այդ ժամանակ կոտայքի մարզպետի պաշտօնը զբաղեցուցած անձի՝ Քավալենքօ Շահկալտեանի եւ Սամուէլ Մայրապետեանի միջեւ 2007 թուականի Մայիսի 31-ին կնքուած հողամասի առուվաճառքի պայմանագիրը, անոր հիման վրայ կատարուած՝ Մարտ 14-ի համայնքին մէջ գտնուող մօտ 20000 քմ հողամասի նկատմամբ Սամուէլ Մայրապետեանի սեփականութեան իրաւունքի պետական արձանագրումը: 37 միլիոն 593 հազար դրամ շուկայական արժէքին մօտարկուած կադաստրային արժէքով շուրջ 20000 քմ մակերեսով «յատուկ պահպանող տարածք» նպատակային նշանակութեամբ հողամասին նկատմամբ արձանագրուած է Հայաստանի Հանրապետութեան սեփականութեան իրաւունքը:


Երկրին Մէջ Անկայունութեան Չեւաւորման Գործընթացը Կանխուեցաւ. Քոչարեան

«Երկրում սկսուել էր ներքին անկայունութիւն ձեւաւորուելու գործընթացը, եւ բացայայտումը հնարաւորութիւն տուեց կանխել հետագայ բոլոր զարգացումները», «Ազատութեան» հետ գրոյցին նշեց խորհրդարանի Պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը՝ անդրադառնալով Երեւանի մէջ ըստ Քննչական կոմիտէի բացայայտուած ահաբեկչութեան դէպքերուն:

Քննչական կոմիտէն տեղեկացուց, որ բացայայտուած են ահաբեկչութեան դէպքեր, որոնք ուղղուած եղած են իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան, անոր անդամներուն, այդ շարքին՝ խմբակցութեան պատգամաւորներ Գագիկ Մելքոնեանի եւ Գուրգէն Արսէնեանի դէմ: Մելքոնեանի պարագային՝ երկու անձ պայթուցիկ սարքը սխալմամբ նետած էին պատգամաւորի հարեւանի տան բակ, իսկ Արսէնեանի եւ ՔՊ գրասենեակներուն առջեւ դրուած սարքերը չէին պայթած:

«Ակնյայտ է, որ երեք տարբեր ուղղութիւններով պայթուցիչներ են կիրառուել, ինչը նշանակում է, որ ծրարաւորման խումբ է աշխատել, եւ նպատակ են ունեցել քաղաքական ինչ-որ գործընթացները համար երկիրը վերածել անկայունութեան», պնդեց Անդրանիկ Քոչարեանը:

«Ազատութեան» հարցումին՝ «որ ուժերուն մասին է խօսքը, ովքեր հետաքրքրուած են այդ անկայունութեամբ», իշխող ուժը ներկայացնող պատգամաւորն արձագանքեց. «Պարզ երեւում է, որ կուսակցական պատականելութեամբ մարդիկ գերիշխում են, դա քննութեան աւարտին պարզ կը լինի, եւ հիմա դա չեմ կարող ասել, բայց ես եմնում են այն մտավախութեան, որ մենք տեսանք՝ «Հոկտեմբերի 27»-ի քաղաքական մասնակցութեան շրջանակները որտեղ կա-



Խորհրդարանի Պաշտպանութեան յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեան

րող են սկսուել եւ ինչով կարող է աւարտուի»: Այս հարցով կալանաւորուած է Գաշնակցական Գագիկ Սարգսեանը, նաեւ երեք այլ անձիք: Քննչական կոմիտէն տեղեկացուց չորս անձի, այդ շարքին՝ Գագիկ Սարգսեանի նկատմամբ ահաբեկչութեան յղուածով քրէական հետապնդում յարուցելու մասին:

Ըստ կառուցչին՝ բացայայտուած ահաբեկչութեան դէպքերը ուղղուած եղած են իշխող «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութեան, անոր անդամներուն, այդ շարքին՝ խմբակցութեան պատգամաւորներ Գագիկ Մելքոնեանի եւ Գուրգէն Արսէնեանի դէմ:

Մասնաւորապէս, կոմիտէին փոխանցմամբ, Գագիկ Սարգսեանը բնակչութիւնը ահաբեկելու, իշխանութեան մարմիններուն գործունէութիւնը կազմալուծելու համար կազմակերպած է ահաբեկչութիւն պատգամաւոր Գագիկ Մելքոնեանի դէմ՝ նպատակ ունենալով զայն գերծ պահել քաղաքական յստակ յայտարարութիւններէ եւ դիրքորոշումներէ:

Երեւանը Լուծումներ Պիտի Առաջարկէ Մոսկուային՝ Ռուսական Ալիքներու Բովանդակութեան Վերաբերեալ

Հայաստանն ու Ռուսաստանը յառաջիկային Մոսկուայի մէջ խորհրդակցութիւններ պիտի ունենան, որոնց ընթացքին հայկական կողմը առաջարկներ պիտի ներկայացնէ Հայաստանի մէջ հեռարձակուող ռուսական հեռուստատալիքներու բովանդակութեան հետ կապուած:

Ազգային ժողովին մէջ լրագրողներու հետ գրոյցին այս մասին ըսաւ Բարձր Արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեանը: «Խնդրի կարգաւորման վերաբերեալ Հայաստանի կառավարութիւնն ունի իր պատկերացումներն ու լուծումները: Առաջիկայում Մոսկուայում ընթանալու են խորհրդակցութիւններ, ինչպէս ենթադրում է երկկողմ միջպետական համաձայնագիրը: Դրա ընթացքում հայկական կողմը ներկայացնելու է լուծումների վերաբերեալ իր առաջարկները: Լուծումները բխում են ինչպէս համաձայնագրի ողջ տրամաբանութիւնից, այնպէս էլ Հայաստանի պետական շահերից, այն է՝ ապահովել համապատասխան հեռուստաբովանդակու-



Նախարար Մխիթար Հայրապետեան

թիւն, որը որեւէ պարագայում չի ենթադրի միջամտութիւն Հայաստանի ներքին գործերին, վերաւորանք Հայաստանի պետական խորհրդանիշերի, առհասարակ պետութեան նկատմամբ, ինչպէս նաեւ Հայաստանի ժողովրդի յոյզերի ու արժանապատուութեան», ըսաւ նախարարը:

ԼՈՒՐԵՐ

Հայաստանի «Խաղաղութան Խաչմերուկ» Ծրագիրը Չափազանց Կարելի է Մեր Երկիրներուն Համար. Նուրբլու

Հայաստանը ունի «Խաղաղութան Խաչմերուկ» ծրագիրը, կը կարծեմ՝ այդ չափազանց կարելի է մեր երկիրներուն համար:

Երեւանի մէջ ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանի հետ համատեղ ասուլիսի ժամանակ այս մասին յայտնած է Ղազարխիստանի Հանրապետութեան արտաքին գործերու նախարար Մուրատ Նուրբլու:

«Մենք նպատակ ունինք համագործակցել մեր գործընկերներուն հետ, որպէսզի այս միջին միջանցքը վերջապէս իրականացնէ իր ներուժը ամբողջութեամբ:

Հաշուի առնելով Հայաստանի աշխարհագրական առաւելութիւնը՝ Հայաստանը չափազանց մեծ նշանակութիւն ունի Ղազարխիստանի համար միջցամաքային ծրագրերու մէջ: Ամրացնելով առեւտրային, տնտեսական, ձեռնարկատիրական, ներդրումային համագործակցութիւնը մեր երկիրներուն միջեւ՝ այդ կրնայ զգալի խթան հաղորդել մեր երկիրներու զարգացման:

Այս յարաշարժութիւնը չափազանց կարեւոր է մշակութային, մարդասիրական կապերու համար:

Ղազարխիստանի մէջ կայ հայ-կական սփիւռք, որ ոսկեայ կա-



Ղազարխիստանի արտաքին գործերու նախարար Մուրատ Նուրբլու

մուրջի դեր կը խաղայ մեր երկիրներու միացման բնագաւառին մէջ: Ղազարխիստանի մէջ կ'ապրի աւելի քան 25 հազար հայ, մեր բազմազգ երկիրն մէջ ստեղծուած են բոլոր պայմանները, որպէսզի այս մարդիկ ստանան կրթութիւն, աշխատին եւ գործուն մասնակցին մեր տնտեսութեան զարգացման», ըսած է Ղազարխիստանի արտաքին գործերու նախարարը:

Լեռնային Ղարաբաղի Քաղաքական Վերնախաւը Ձբաղած Եր Իշխանութիւն Փոխելով. Միրզոյեան



ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան

Այս մասին ըսած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը՝ պատասխանելով Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Աննա Գրիգորեանի հարցումին ԼՂ հայաթափման վերաբերեալ:

«Մենք կապ չունենք, մենք փորձում էինք այնպէս անել, որ Լեռնային Ղարաբաղի հայութիւնը մնայ իր պատմական բնօրրանում, բայց այստեղից շարունակաբար քննադատութիւններ էինք լսում ձեր կողմից, իսկ դրան ի պատասխան՝ Լեռնային Ղարաբաղի քաղաքական վերնախաւը զբաղուած էր իշխանութիւն փոխելով, մի քանի օրուայ իշխանութեամբ օժտուած մարդուն ուղարկեցին, ու նա Լեռնային Ղարաբաղի լուծարման մասին հրամանագրով հանդէս եկաւ:

«Փաստերն ակնյայտ են, դուք քննադատում էիք մեր կոչերն առ-

այն, որ բանակցեն իրաւունքների շուրջ, իսկ Ստեփանակերտում ձեր ձայնն աւելի բարձր էր լսուում, ու փոխանակ իրաւունքների հարցով զբաղուէին, ընդունում էին բանաձեւեր ինչ-որ տարածքների մասին: Մէկ էլ գնացին 2 օրում լուծարեցին իրանց հռչակած Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը: Մենք մեղաւոր չենք», յաւելած է Միրզոյեան:

Միրզոյեան նշած է, որ տիեզերական գաղտնիք չէ այն, որ Հայաստանի բոլոր իշխանութիւնները միշտ բանակցած են որոշակի տարածքներ գիշերու վերաբերեալ. «Զգիտեմ՝ ով, ինչ, որ փուլում, որ պատմական պահին ինչ շահ է ունեցել այլ բան ասելու Հայաստանի հանրութեանը, բայց, կարծում եմ, բոլորը կարող են հասկանալ, որ բանակցութիւններն առաջին օրուանից եղել են տարածքներ գիշերու բանակցութիւններ»:

ԵՄ Արտաքին Գործերու Նախարարները Վերահաստատած Են Իրենց Աջակցութիւնը Հայաստանին. Սթանո

ԵՄ անդամ 27 երկիրներու արտաքին գործերու նախարարների խորհուրդի նիստի ընթացքին, ի թիւս այլ հարցերու, քննարկուած է նաեւ ԵՄ-ի աջակցութիւնը Հայաստանին, ինչպէս նաեւ հայատրպէյճանական յարաբերութիւններու կարգաւորման հարցը:

Նիստի աւարտին ԵՄ արտաքին յարաբերութիւններու հարցերով գլխաւոր խօսնակ Փիթըր Սթանօն Պրիւքսէլի մէջ «Արմենիա»-ի թղթակցին փոխանցած է, որ արտաքին գործերու նախարարները նիստին վերահաստատած են իրենց աջակցութիւնը Հայաստանին՝ յիշեցնելով Նոյեմբերին կայացած նիստին արդիւնքներով յայտարարուած բոլոր տարրերը, ինչպէս նաեւ աջակցութիւնը ՀՀ-ԵՄ յարաբերութիւններու նոր օրակարգի աշխատանքներուն, հայ-ատրպէյճանական յա-



ԵՄ արտաքին յարաբերութիւններու հարցերով գլխաւոր խօսնակ Փիթըր Սթանօն արտաքին գործերու հետազայ կարգաւորման:

ԵՄ-ն 2022-ին Արձանագրած Է, Որ ՀՀ Ներխուժում Եղած Է, Ցաւօք, ՀԱՊԿ-ը Չէ Արձանագրած. Ռուբինեան

ՀՀ Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեանը ԱԺ-ի մէջ ԵՄ առաքելութեան համաձայնագրի վաւերացման նախագիծի քննարկման ընթացքին արձագանգելով Աղվան Վարդանեանին, որ փաստական սխալ տուեալներ կը ներկայացնէր, ըսաւ. «Ոչ թէ սկզբից 32, յետոյ 31, այլ 31 ոչ-ներգաւառային, այլ առաւել մէկ՝ Արծուաշէնը: Եւ երկրորդը՝ ինչ վերաբերում ՀՀ ինքնիշխան տարածքների բռնագրաւմանը, դրանց մի մասը բռնագրաւուել է 90-ականներին, եւ մի բան էլ յիշեցնեմ, որ ԵՄ դիտորդական առաքելութեան մասին պայմանաւորուածութիւնը ձեռք է բերուել 2022 թուականի Հոկտեմբերին, եւ ուզում եմ յիշեցնել, որ դրան նախորդել էր 2022 թուականի սեպտեմբերեան յարձակումը, որով բռնագրաւուեց ՀՀ ինքնիշխան տարածքի մի մասը, որ ԵՄ ներկայացուցիչ-



Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան ներքը որակել են որպէս ներխուժում ՀՀ ինքնիշխան տարածք, ցաւօք, ՀԱՊԿ-ը դա չի որակել այդպէս», ըսաւ ան:

Ցեղասպանութիւններու Կանխարգիլման Օրակարգը Առաջնայնութիւններու Շարքին

Ցեղասպանութիւններու կանխարգիլման օրակարգը կը շարունակէ մնալ ՀՀ արտաքին քաղաքականութեան առաջնայնութիւններու շարքին: Հայաստանը այս ուղղութեամբ աշխույժ կը համագործակցի միջազգային գործընկերներու հետ: Այս մասին յայտնած է ՀՀ ԱԳՆ-ն՝ պատասխանելով «Sputnik Արմէնիայի» գրաւոր հարցումին, թէ գերատեսչութիւնը ինչ կ'ընէ Հայոց Ցեղասպանութեան ճանաչման գործընթացը յառաջ մղելու հարցով:

ԱԳՆ-էն կ'ընդգծեն, որ իւրաքանչիւր տարի Դեկտեմբեր 9-ին՝ Ցեղասպանութեան զոհերու յիշատակին եւ արժանապատուութեան եւ այդ յանցագործութեան կանխարգիլման միջազգային օրը (հաստատուած է 2015-ին ՀՀ կողմէ ՄԱԿ Գլխաւոր վեհաժողովին ներկայացուած բանաձեւով) Հայաստանի եւ արտերկրի մէջ կը կազմա-

կերպուին շարք մը խորհրդատուներ եւ քննարկումներ:

«2023 թուականի Դեկտեմբերի 4-ին՝ ի կատարումը վերոնշեալ բանաձեւի, ժընեւում կայացել է միջնատարջանային քննարկում նուիրուած Ցեղասպանութեան յանցագործութիւնը կանխարգելելու եւ պատժելու մասին պայմանագրի 75-ամեակին, որի ընթացքում քննարկման առարկայ է եղել ատելութեան տարածումը ընկերային լրատուական հարթակներու օգտագործման միջոցով: Միջոցառմանը բացման խօսքով հանդէս է եկել ՀՀ ԱԳ նախարարը», նշուած է հաղորդագրութեան մէջ:

Բացի անկէ, ԱԳՆ-ն յատուկ կ'ընդգծեն, որ ՄԱԿ Մարդու իրաւունքներու խորհուրդին մէջ երկու տարին մէկ Հայաստանը կը ներկայացնէ «ցեղասպանութեան կանխարգելում» բանաձեւը:

ՀՀ Վարչապետն Ու Նախագահը Շնորհաւորած են Փութինը

Վարչապետ Նիկոլ Փաշինեան շնորհաւորական ուղերձ յղած է Վլատիմիր Փութինին՝ նախագահի պաշտօնում վերընտրուելու առիթով:

Ուղերձին մէջ Փաշինեան յայտնած է, որ երկկողմ հետաքրքրութիւններ կայացնող բոլոր ոլորտներուն մէջ երկխօսութիւնը զարգանայ՝ ի շահ Հայաստանի եւ Ռուսաստանի ժողովուրդներուն:

«Մաղթում եմ Ձեզ, յարգելի Վլատիմիր Վլատիմիրի, առողջութիւն, երջանկութիւն եւ հետագայ յաջողութիւններ Ձեր գործունէութեան մէջ», ըսուած է Փաշինեանի ուղերձին մէջ:
Փութինին շնորհաւորել է նա-

եւ Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեանը եւ յայտնած, որ երկու երկիրները «շարունակեան աշխոյժ փոխգործակցութիւնը քաղաքական, առեւտրատնտեսական, մարդասիրական եւ այլ ոլորտներուն մէջ»:

«Յուսով եմ, որ կը շարունակենք աշխոյժ փոխգործակցութիւնը քաղաքական, առեւտրատնտեսական, մարդասիրական եւ այլ ոլորտներում՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան միջեւ համագործակցութիւնն ու փոխըմբռնումը», ըսուած է նախագահին ուղերձին մէջ:

Հայկական Կողմը ՌԴ-ին Ծանուցած է «Միր» Քարտի Սպասարկումը Դադրեցնելու Մասին

Ռուսական կողմը Հայաստանի վճարային համակարգէն պաշտօնական ծանուցում ստացած է, որ Մարտ 30-էն դրամատունները պիտի դադրեցնեն «Միր» քարտերու սպասարկումը: Այս մասին յայտնած է Ռուսաստանեան ԹԱՍՍ պետական գործակալութիւնը՝ վկայակոչելով «Միր»-ի պաշտօնական հաղորդագրութիւնը:

Լրատուամիջոցը կը յաւելէ, որ միեւնոյն ժամանակ «ՎԹՊ Հայաստան» դրամատունը, որ ամբողջութեամբ կը սպասարկէ «Միր» քարտերը իր ենթակառուցուածքներով, պիտի շարունակէ աշխատիլ Հայաստանի մէջ Ռուսական քարտերով:

2024 թուականի Փետրուարին «Միր»-ը կամ Ռուսական ազգային վճարային համակարգը ԱՄՆ պատժամիջոցներու թիրախին յայտն-



ուած է. Ուաշինկթըն կը պնդէ, որ այդ համակարգին միջոցով «Ռուսաստանը կը շրջանցէ պատժամիջոցները եւ կը պահպանէ կապերը միջազգային ֆինանսական համակարգին հետ»:

Մեկնարկած է «AMADEE-24»-ի՝ «Հայաստանէն Դեպի Մարս» Գիտարշաւը



Հայաստանի մէջ մեկնարկած է տիեզերական ոլորտին մէջ հեղինակաւոր «AMADEE-24»-ի առաքելութեան «Հայաստանէն դէպի Մարս» վերտառութեամբ գիտարշաւը, որուն գլխաւոր հովանաւորը «GTB holdings»-ն է:

Մէկ ամիս շարունակ համանման տիեզերագնացները պիտի պատրաստուին դէպի Հրատ (Մարս) թռիչքներուն: Շուրջ 200 հետազօտող 25 երկրէ ժամանած են Հայաստան՝ մասնակցելու համաժողովին: Միջոցառման կը մասնակցի նաեւ Պոպպի Քանկը, GTB Holdings-ի համահիմնադիրը:

Բարձր պատրաստուածութեամբ աժհամանման տիեզերագնացներու փոքր խումբը, որուն

անդամներն են Իտալիայէն Հայաստան ժամանակ օդատիեզերական ճարտարապետ Սիմոնէ Փաթերնոսթրօն, Գերմանիայէն՝ արհեստական բանականութեան փորձագէտ Գարմէն Քելերը, Սպանիայէն՝ աստղաբնագէտ Ինիկո Մուսյոզ Էլորսան, Հոլանտայէն՝ աստղաբնագէտ Թոմաս Վիլքենը: Գիտնականներու խումբը կը ղեկավարեն առողջապահութեան փորձագէտ Անիքա Մեհլիսը եւ բնագէտ Ռոպերթ Ուալտը: Գիտնականները տարբեր գիտափորձեր պիտի կատարեն՝ հիմք նախապատրաստելով մարդոց եւ ռոպոթներու մասնակցութեամբ Հրատի ապագայ առաքելութիւններուն համար:

Բարձրագոյն Ուսումնական Հաստատութիւնները Պիտի Տեղափոխուին «Ակադեմական Քաղաք». Փաշինեան



Ապագայ ակաթեմական քաղաքի մաքերը

Ի վերջոյ Երեւան քաղաքին մէջ երկարաժամկէտ հեռանկարով պէտք է որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն (ԲՈՒՀ) չըլլայ, եւ «Ակադեմական Քաղաք»-էն դուրս որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն պիտի չըլլայ, ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Բոլոր հայաստանեան ԲՈՒՀերը պէտք է գործեն միայն «Ակադեմական Քաղաք»-ին մէջ, Դիլիջանի մէջ կայացած Տնտեսական քաղաքականութեան խորհուրդի նիստին նշած է ան:

Ըստ Նիկոլ Փաշինեանի՝ ԲՈՒՀական ոլորտին մէջ խնդիրները խոր են: Ան նշեց, որ Հայաստանի մէջ կայ 60 ԲՈՒՀ, սակայն եթէ այս ԲՈՒՀերը հաւաստագրեն միջազգային չափանիշերով, Հայաստանի մէջ որեւէ բարձրագոյն ուսումնական հաստատութիւն հաւաստագրում չի ստանար:

«Այս առումով «Ակադեմական Քաղաք»-ը մեզի համար չափազանց կարեւոր ու ռազմավարական ծրագիր է», շեշտեց վարչապետը:

ԲՈՒՀերու ներկայիս շէնքերը, անոր խօսքով, հնարաւոր է համախմբուին մէկ կազմակերպութեան մէջ եւ տրուին կառավարման միջազգային հեղինակութիւն ունեցող ընկերութեան՝ որպէս տարածքներ,

եւ այնտեղէն ստացուող գումարը ԲՈՒՀական համակարգի ֆինանսաւորման ծառայէ:

«Ակադեմական Քաղաք»-ը բաղկացած պիտի ըլլայ 6 ուղղութիւններէ՝ կրթական, արուեստներու, արհեստագիտական, դասական, բժշկական եւ սպայական: Համանուն հիմնադրամը ԲՈՒՀերուն վերջերս ուղարկած է աւանի տարածքին մէջ ձեւաւորուող աշխատանքային խումբերու կազմը: Ըստ այդ փաստաթուղթին՝ օրինակ՝ արուեստներու խումբին մէջ Երաժշտանոցին պիտի միանան Գեղարուեստի ակադեմիան, Թատերականը ու քանի մը մշակութային կառույցներ: Երաժշտանոցին մէջ այս որոշման դէմ ստորագրութիւն սկսած է: Քանի մը օր առաջ «Ակադեմական Քաղաք»-ին մէջ այլ ԲՈՒՀերու հետ միաւորուելուն դէմ արտայայտուած էր նաեւ Գեղարուեստի ակադեմիայի տնօրէն Արամ Իսաբեկեանը:

Յստակ չէ՝ երբ լիարժէք պիտի սկսի գործել «Ակադեմական Քաղաք»-ը: Թէեւ կրթութեան նախարարը 2030 թուականի մասին կը խօսի, աւանի կառուցման գլխաւոր յատկազիծը կազմած գերմանական ընկերութեան ներկայացուցիչը լրիւ այլ ժամկէտ նշած էր՝ 15-20 տարի անց:

Եւրոխորհրդարանը Ընդունեց

Շարունակուած էր 1-էն

սին Եւրոխորհրդարանի ընդունած բանաձեւը Ատրպէյճանի մէջ հերթական շղագրութեան պատճառ դարձած է:

«Հայաստանի հետ կապերու ամրապնդման վերաբերեալ բանաձեւը «Ատրպէյճանի նկատմամբ երկակի չափանիշերու վառ օրինակ է»»:

Այս մասին կ'ըսուի Ատրպէյճանի ԱԳՆ մամուլի քարտուղար Ալիսան Հաճիգատիի մեկնաբանութեան մէջ՝ կապուած Մարտ 13-ին Եւրոխորհրդարանին կողմէ ընդունուած բանաձեւին հետ, որուն մէջ խորհրդարանականները խորհուրդ տուած են գործադիր կառույցներուն ամրապնդել յարաբերութիւնները Եւրոմիութեան եւ Հա-

յաստանի միջեւ:

«Եւրոխորհրդարանի 2024 թուականի Մարտ 13-ի բանաձեւը, ըլլալով անհիմն եւ կողմնակալ, նաեւ երկակի չափանիշերու վառ օրինակ է մեր երկրին նկատմամբ», նշած է արտաքին քաղաքական գերատեսչութեան պաշտօնական ներկայացուցիչը:

Պաքոն Եւրոխորհրդարանին առաջարկած է «լուծել աւելի լուրջ խնդիրներ Եւրոպայի մէջ, քանի որ համոզուած է՝ «այնպիսի բանաձեւերը, ինչպիսին ընդունուածն է, որեւէ առնչութիւն չունին անոնց մէջ ամրապնդուած արժէքներու հետ, ինչպէս նաեւ ամբողջութեամբ կը գերոյացնեն Եւրոխորհրդարանին՝ որպէս հիմնարկ դերը»:

Massis Weekly

Volume 44, No. 11

Saturday, March 23, 2024

NATO Chief Supports Armenia's Territorial Integrity Praises Country's Foreign Policy



YEREVAN — NATO Secretary General Jens Stoltenberg commended Prime Minister Nikol Pashinyan for pursuing a “more independent” foreign policy and deepening Armenia’s ties with the U.S.-led alliance when he visited Yerevan on Tuesday.

“We support your sovereignty and territorial integrity and we also support your efforts to develop a more independent foreign policy, which we think is important,” he told Pashinyan at the start of their talks.

“This is important for Euro-Atlantic security as we face a more dangerous world. Today, Armenia and Azerbaijan have a chance to achieve lasting peace after years of conflict. That is why I call on the two countries

to reach an agreement that will pave the way for the normalization of relations and lasting peace for your peoples,” Stoltenberg said.

Stoltenberg arrived in the Armenian capital on the last leg of his tour of the three South Caucasus.

“Of course, we are interested in deepening our cooperation with NATO, and I hope that the Individually Tailored Partnership Program for Armenia will be accepted as soon as possible,” the premier told Stoltenberg.

The NATO chief likewise expressed hope that the framework for closer NATO-Armenia cooperation will

Continued on page 2

Pashinian Meets Border Villagers On Land Transfer to Azerbaijan



TAVUSH -- Prime Minister Nikol Pashinyan met on Monday with concerned residents of two villages in Armenia’s northern Tavush province adjacent to border areas which are part of delimitation process discussions with Azerbaijan.

The statement prompted serious concern from residents of several Tavush villages that would be affected by the withdrawal. The villagers say they would lose access to their land, have trouble communicating with the rest of the country and be far more vulnerable from Azerbaijani armed at-

tacks.

Pashinyan visited two of those border villages, Voskepar and Kirants, and spent more than three hours discussing the issue with locals behind the closed doors. Speaking to RFE/RL’s Armenian Service afterwards, he said he repeated his assertions that the areas in question are technically not part of Armenia’s internationally recognized territory.

Pashinyan said that the meetings had been completely video-recorded,

Continued on page 3

The European Parliament Adopts Resolution Proposing to Consider Armenia's Candidacy for EU Membership



STRASBOURG — The legislative body of the European Union proposes to the executive power to consider the possibility of granting Armenia the status of a candidate for membership in the European Union.

“If Armenia is interested in obtaining candidate status and continues on the path of sustainable reforms that strengthen its democracy, it can be the basis for a phase of transformation in EU-Armenia relations,” said the resolution jointly presented by the deputies of the European Parliament, which was adopted this evening by 504 votes, with 4 against and 32 abstentions.

In the document, the European Parliament calls on the European Commission and the Council to actively support Armenia in expanding cooperation with the EU, not only in economic matters, but also in the fields of security, political dialogue, and people-to-people contacts.

The resolution, which is advisory in nature and does not have binding force, nevertheless became the first official response of the European Union to the recent statements from Yerevan about the desire to get closer

Continued on page 4

Massis Publishing Presents Academic Book on the History of Social Democrat Hnchakian Party



PASADENA -- On March 14, 2023, Massis Publishing hosted a book presentation for the recently published work titled "The Armenian Social Democrat Hnchakian Party: Politics, Ideology, and Transnational History."

Alison Ghafari, an Executive Board member of the Armenian Council of America, commenced the presentation by contextualizing the significance of Massis Publishing within the Armenian community. She out-

lined Massis Publishing's evolution from its origins as "Massis Weekly," a newspaper covering diverse perspectives and news from Armenia and the diaspora, to the present where it operates MassisPost.com and manages a catalogue of Armenian music. Ghafari emphasized Massis Publishing's ongoing efforts to preserve Armenian history through the translation and pub-

Continued on page 3

Armenian, Kazakh MFAs Sign 2024-2025 Cooperation Plan



YEREVAN -- The Foreign Ministers of Armenia and Kazakhstan Ararat Mirzoyan and Murat Nurtleu have signed the 2024-2025 cooperation plan between the Foreign Ministries of the two countries.

The program is important for strengthening and adjusting Armenian-Kazakh mutual cooperation, Kazakh Foreign Minister said at a press conference in Yerevan.

“A significant step was taken today, which can give additional impetus to Armenian-Kazakh relations. I am confident that the agreements we have reached will be fully implemented. I am ready to do everything on my part so that our work in this direction continues,” Nurtleu said.

Armenia and Kazakhstan have a chance to open a new page in bilateral relations for the benefit of the two countries, Foreign Minister Ararat Mirzoyan said in response.

“Indeed, we are expanding the bases of our cooperation, the high level of our political dialogue testifies that the necessary prerequisites are there. Our trade and economic relations are developing dynamically,” Minister Mirzoyan said, emphasizing that there is still a huge untapped potential.

During a tête-à-tête meeting earlier today the sides expressed willingness to develop the relations and make use of the untapped potential.

Ararat Mirzoyan stressed that Armenia is interested in developing bilateral relations with everyone – from the American continent to East Asia.

“Of course, the relations with Kazakhstan play an important role in this vision, and I’m glad to see the same interest from the Kazakh side. Today we reached concrete agreements on the development of these relations,” the Armenian Foreign Minister said.

Armenia, UK Look at Ways to Bolster Defense Cooperation



LONDON -- On March 19th, Armenia’s Ambassador to UK, H.E. Varuzhan Nersesyan met with Gilbert Timothy George Lariston Elliot-Murray-Kynynmound, the Earl of Minto, Minister of State for Defense.

Ambassador Varuzhan Nersesyan emphasized the importance of continuing to develop collaboration with the UK, particularly in defense, underscoring Armenia’s unwavering com-

mitment to regional stability and peace. Highlighting the positive strides in bilateral cooperation, the Ambassador referenced the defense consultations between the Ministries of Defense of both nations late last year.

During the meeting, the sides touched upon avenues for bolstering defense cooperation, reflecting the shared resolve of Armenia and the UK towards maintaining peace and security.

MEPs Call on EU Leaders to Take Steps Towards Protection of Armenian Cultural and Religious Heritage in Artsakh



STRASBOURG — A number of Members of the European Parliament have called on EU leaders to ensure that EU takes active steps towards the protection of the Armenian cultural and religious heritage in Nagorno-Karabakh.

MEP Miriam Lexmann wrote about this on her official page of X, attaching the contents of a lengthy letter addressed to Charles Michel, President of the European Council, Ursula von der Leyen, President of the

European Commission, and Roberta Metsola, President of the European Parliament.

“Armenian cultural & religious heritage in Nagorno Karabakh is a fundamental part of our common European heritage.

